ՀՏԴ: 929: 891.981 Հովհաննիսյան

DOI: 10.54503/0135-0536-2025.3-266

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(Ծննդյան 70-ամյակի առթիվ)*

Լրացավ ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ հին և միջնադարյան գրականության բաժնի առաջատար գիտաշխատող, բ. գ. դ., դոցենտ Սուսաննա Հովհաննիսյանի 70-ամյակը: Հայագիտության ոլորտում գրականագետի անցած ավելի քան 45-ամյա ուղին եղել է հարուստ ու արգասաբեր:

Ս. Հովհաննիսյանը ծնվել է Երևանում՝ 1955 թ. դեկտեմբերի 1-ին, Արևմտահայաստանի Մեծ Հայքի Աղձնիք նահանգի Բիթլիս (Բաղեշ) քաղաքում ծնված և Հայոց ցեղասպանությունը վերապրած Գուրգեն Հովհաննիսյանի և պատմաբան-մանկավարժ Վարդուշ Թորոսյանի ընտանիքում:

Ս. Հովհաննիսյանը սկզբնական կրթությունը ստացել է Նար-Դոսի անվան դպրոցում (1961–1969 թթ.), ապա սովորել է Ռաֆֆու անվան դպրոցում (1970–1972 թթ.): Ուսումը շարունակել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետում (1973 – 1979 թթ.): 1977–1979 թթ. սովորել է նաև Հասարակական մասնագիտությունների արվեստագիտության բաժնում, որը, ինչպես և բանասիրության ֆակուլտետն ավարտել է 1979-ին գերազանցության դիպլոմներով: 1980–1984 թթ. սովորել է ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում «Հայ նոր գրականություն» մասնագիտությամբ: Նա Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի մասնագիտացված խորհրդի անդամ է, «Գրականագիտական հանդեսի» և 2020-ից՝ «Բանբեր հայագիտության» միջազգային հանդեսի խմբագրական խորհրդի անդամ: Աշխատանքային գործունեությունը սկսել է ԵՊՀ հրատարակչությունում դեռևս ուսանողական տարիներին, երբ սովորում էր բանասիրական ֆակուլտետի 2-րդ կուրսում: 1980–1988 թթ. աշխատանքի է անցել Թումանյանի թանգարանում՝ որպես գիտաշխատող: 1988 հոկտեմբերի 16-ից ցայսօր աշխատում է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում:

Գիտական գործունեությանը զուգահեռ Ս. Հովհաննիսյանը զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ: Դասախոսել է ԵՊՀ-ում (1981–1983 թթ.), Ճարտարագիտական համալսարանում (1990–1993 թթ.), Մոսկվայի նոր իրավաբանական ինստիտուտում (1990–1999 թթ.), Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում (2015–2020 թթ.) և այլ բուհերում: Հյուսիսային համալ-

* *Ներկայացվել է 17. XI. 2025 թ., ընդունվել է տպագրության 17. XI. 2025 թ.:*

տարանում (1999–2015 թթ.) 15 տարի ղեկավարել է հայոց լեզվի և գրականության ամբիոնը: 2015 թ. որպես «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի» կրթության փորձագետ մասնակցել է ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացին: Մանկավարժական փորձառությունը արտահայտվեց նրա հեղինակած ««Հայոց լեզու և խոսքի մշակույթ» առարկայի ծրագրի ուսումնամեթոդական դրույթներ» ձեռնարկում (2006 թ.):

Գիտահետազոտական ընագավառում առաջին քայլերն արել է ավարտական թեզի ղեկավար Մագդա Ջանփոլադյանի, ապա թեկնածուական թեզի ղեկավար ակադեմիկոս և թումանյանագիտության երախտավոր Էդվարդ Ջրբաշյանի ղեկավարությամբ: «Թումանյանը և հայ գրողների կովկասյան ընկերությունը» վերնագրով թեկնածուական թեզը պաշտպանել է 1986 թ., իսկ 2010 թ.՝ դոկտորական ատենախոսությունը՝ «Հովհաննես Թումանյանի կյանքի ու ստեղծագործության պատմությունը (1900–1912 թթ.). գիտական կենսագրություն» թեմայով:

Հովհաննիսյանն իր ուժերը փորձել է գրականագիտության տարբեր ոլորտներում: Նրա առաջին քայլերն արդեն վկայում են գրականության տեսության խնդիրների հանդեպ հետաքրքրությունների մասին: Գրականագետի առաջին հոդվածը՝ «Հեղինակի, պատմողի և հերոսի խոսքի առանձնահատկությունները Գրիգոր Զոհրապի նորավեպերում» վերնագրով, լրացրեց զոհրապագիտության բաց էջերից մեկը՝ առաջին անգամ արծարծելով նորավիպագիր Զոհրապի արձակի պոետիկայի խնդիրները (1981): Գիտնականը բազմիցս անդրադարձել է գրողի գիտական կենսագրության ժանրի դերին գրականագիտության ընդհանուր համապատկերում՝ այդ համատեքստում քննելով հայ միջնադարյան պատմիչների և գրողների՝ արվեստագետի կյանք-ստեղծագործություն առնչակցության մասին տեսական պատկերացումները («Ованес Туманян – изученный и неизученный». – «Вопросы литературы», М., 2009, № 6, с. 420–426)*: Յեղասպանության թեմայով ծնվեցին գրականագետի՝ պատմական ուղղվածություն ունեցող երկու մենագրությունները՝ «Թումանյանը Առաջին աշխարհամարտի տարիներին» (2018) և «Որբերի Ամենայն հայոց հայրիկը» (2019)՝ տպագրված երեք լեզուներով: Առանձնահատուկ ուշադրության են արժանացել մանկագրության ժանրային խնդիրները, XX դարասկզբի տեսական և քննադատական մտքի զարգացման առանձնահատկությունները, գրողի կյանքում մարգարեականության, ինտուիցիայի ու հեռազգացության դերը, գրական ուղղություններն ու դպրոցները (ՊԲՀ, 2022, № 2, էջ 122–140,* «Вопросы литературы», 2023, № 5, с. 158–166*): Առանձին խումբ են կազմում հայ գրողների, խմբագիրների, հայագետների, եկեղեցական գործիչների, կաթողիկոսների և հայ մշակույթի այլ բնագավառների գործիչների, երաժիշտների (Գ. Լևոնյան, Ա. Արփիարյան, Մ. Աբեղյան, Էդ. Ջրբաշյան, Կոմիտաս, Ավ. Սպենդիարյան, Մխիթարյաններ, Խրիմյան Հայրիկ, Մ. Իզմիրլյան, Գ. Տեր-Մկրտչյան, Գար. Հովսեփյան, Ավ. Ահարոնյան, Ս. Զավարյան, Լեո և այլք) դիմանկար - հոդվածները:*

Գրական կապերի ուսումնասիրության ոլորտում Ս. Հովհաննիսյանի հետազոտություններն ընդգրկել են հայ-վրացական, հայ-անգլիական, հայ-ռուսական, հայ-իսպանական, հայ-պարսկական և այլ ազգերի գրողների ու գրական

խմբավորումների բազմաբնույթ փոխհարաբերությունները: Գիտնականը առաջին անգամ օտարալեզու ընթերցողին ծանոթացրեց հայ դոստոևսկիագիտության և Դոստոևսկու ստեղծագործությունների հայերեն թարգմանությունների պատմությանը («Достоевский в литературной жизни Армении», Неизвестный Достоевский. 2024, т. 11, № 1. с. 184–205)*: Վերջին շրջանում գրականագետի համար ուսումնասիրության նյութ են եղել հայ-պարսկական գրական կապերը, հայ արևելագետների ներդրումը պարսից գրականության ուսումնասիրության գործում, իրանական գրականությունից արված հայերեն թարգմանությունների ծավալուն պատմությունը: Հայաստանում տպագրվել, ապա Բոստոնում և այլուր արտատպվել են նրա՝ գրական կապերին վերաբերող հոդվածները:*

Ս. Հովհաննիսյանի գիտական գործունեության կարևոր ոլորտներից մեկը բնագրագիտությունն է և աղբյուրագիտությունը: Նա շրջանառության մեջ է դրել հայ գրականության, հուշագրության ու հրապարակախոսության համար արժեքավոր հոդվածներ ու նյութեր՝ նվիրված Ավ. Իսահակյանին, Վ. Տերյանին, Վ. Բրյուսովին, Ս. Գորոդեցկուն և այլ հեղինակների: Գիտնականը առաջին անգամ շրջանառության մեջ է դրել պատմական վավերագրեր (ՊԲՀ, 2013, № 1, էջ 178–185), Ս. Զավարյանի («ՎԷՄ», 2013, № 4, 246–250), զորավար Անդրանիկի (ՊԲՀ, 2014, № 2, էջ 171–186), Ս. Գորոդեցկու (ՊԲՀ, 2021, № 2, էջ 179–195, «Интеллигенция и мир» (Иваново), 2023, № 1, с. 124–154)*, Նվ. Թումանյանի (2014) նամակները, Կոմիտասին առնչվող վավերագրեր («Կոմիտասական», 2019, էջ 151–165), Զարենցի անհայտ բանաստեղծություն (ՊԲՀ, 2024, № 1, 172–189) և այլն: Աղբյուրագիտական ոլորտում նշանակալի է գրականագետի ավանդը Թումանյանագիտության ասպարեզում: Նա հայտնաբերել է Հովհ. Թումանյանի ստորագրությամբ «Առայժմ» հոդվածը, մեկ տասնյակից ավելի անստորագիր հոդվածներ, առաջին անգամ ծավալուն ծանոթագրություններով հրատարակել է Թումանյանի «Բանտի օրագիրը», 1914–1915 թթ. ծոցատետրերը և այլ վավերագրեր, 453 էջի սահմաններում հեղինակել է Թումանյանի կյանքի 1891–1894 և 1912–1913 թթ. տարեգրությունը, որը մի ամբողջ հատոր է կազմում (Տարեգրություն, հ. 1, էջ 113–228, հ. 2, էջ 349–687):*

Ս. Հովհաննիսյանի գիտամանկավարժական գործունեությունը բարձր է գնահատվել ինչպես Հայաստանի, այնպես էլ արտերկրի գիտական ու կրթական հաստատությունների կողմից: Նա արժանացել է մի շարք դրամաշնորհների և հաղթել գիտական մրցույթներում: 2016 թ. ներառվել է ՀՀ գիտության կոմիտեի հայտարարած ազգային գիտնականների լավագույն հարյուրի կազմում: 2017, 2018, 2019 և 2021 թթ. դարձել է բարձր արդյունավետությամբ հետազոտողներին հավելավճար տրամադրելու մրցույթի հաղթող (21PR-6B0137): Ղեկավարել է «Հովհաննես Թումանյանը համաշխարհային մտքի գնահատմամբ» (01. 09. 2018 – 31. 08. 2019) թեմատիկ խումբը:

Դասախոսական գործունեության համար Ս. Հովհաննիսյանը պարգևատրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության պատվոգրով «Կրթության ոլորտում ներդրած ավանդի համար» (2006), «Հյուսիսային համալսարան» շքանշանով՝ որպես լավագույն ամբիոնի վարիչ (2011), «Հովհաննես Թումանյան 145» շքանշանով՝ «Վերնատուն» Թումանյան կենտրոնի արդյունավետ կառավարման համար (2014), ճանաչվել է Գոգոլի անվան միջազգային գրական մրցույթի դափնեկիր՝ ստանալով «Տրիումֆ» շքանշան (2015): Նույն թվականին

ընտրվել է Ուկրաինայի գրականության և արվեստի միջազգային ակադեմիայի անդամ (2015): Ս. Հովհաննիսյանը Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում ստացել է «Լավագույն դասախոս» կոչում (2018): «Հովհաննես Թումանյանի կյանքը» ուսումնասիրությունը արժանացել է ՀՀ նախագահի «Պողոսյան մրցանակի» (2020): ՀՀ անկախության շրջանում առաջին անգամ Հովհաննիսյանի գրքի շնորհանդեսը կազմակերպվեց Մոսկվայում՝ ՌԴ գիտությունների ակադեմիայի Ա. Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտում (2019): Աշխատությունը հայ գիտնականներից բացի բարձր գնահատեցին ՌԴ ԳԱ ակադեմիկոս Ալ. Կուդելինը, Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի պրոֆեսոր բ. գ. դ. Կազբեկ Սուլթանովը և այլք:

Ս. Հովհաննիսյանի ավանդը հատկապես մեծ է թումանյանագիտության ոլորտում: Ավելին, մեր կարծիքով, նա իր արժանի տեղը գտավ թումանյանագիտության երախտավորների՝ Ա. Ինճիկյանի, Էդ. Ջրբաշյանի, Մ. Ջանփոլադյանի, Հ. Թամրազյանի, Լ. Հախվերդյանի, Զ. Ավետիսյանի, Ա. Եղիազարյանի և նույն սերնդի այլ թումանյանագետների շարքում: Բանաստեղծի կյանքի և գործի հետազոտությունն արդեն տասնամյակներ շարունակ հետևողական ու լուրջ քննության ընույթ է կրում: Գիտնականի նախասիրությունների հիմնական առանցքը դարձավ թումանյանագիտությունը, որին նվիրված է նրա աշխատությունների մեծ մասը՝ «Թումանյանը և Հայ գրողների կովկասյան ընկերությունը» (2007, 400 էջ), «Հովհաննես Թումանյանի կյանքի ու ստեղծագործության պատմությունը (1900–1912 թթ.). գիտական կենսագրություն» (2012, 749 էջ), «Հով. Թումանյանը մանկագրության խաչմերուկներում» (2018, 334 էջ), «Վերնատուն» (2018, 288 էջ), «Ованес Туманян в годы Первой мировой войны» (2018, 620 с.), *«Կանայք Հովհաննես Թումանյանի կյանքում» (2019, 205 էջ),* «Жизнь Ованеса Туманяна» (2019, 864 с.): *«Որբերի Ամենայն հայոց հայրիկը» մենագրությունը (2019, 259 էջ) հրատարակվել է երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն* («Отец всех армянских сирот», Ереван, 2019, 288 с.) *և անգլերեն* (“The All-Armenian Father of Orphans”, Yerevan, 2019, 216 p.)*:*

Գրականագետի աշխատությունները բարձր են գնահատվել ժամանակի անվանի թումանյանագետների ու ակադեմիկոսների կողմից: Ս. Սարինյանը գրում է. «Որոնումների սահմանը գրեթե անընդգրկելի է. բազմաբնույթ մամուլի էջերից, արխիվային աղբյուրներից ... և, ամենակարևորը, գրողի ներաշխարհի արձագանքներից հետազոտողը հյուսել է մի կյանքի պատմություն, որի մեջ ընկվում են ազգային գոյության բոլոր ուղեգծերը՝ սոցիալական, քաղաքական, մշակութային, գրական և այլն ... Հովհաննիսյանի սույն գիրքը ընթերցման հաճույք է պատճառում ոչ միայն բանասիրական լիակատար իրացումներով, այլև շարադրանքի ... սահուն անցումներով, հանճարի ինքնաստեղծման առասպելի գրավչությամբ» (ՊԲՀ, 2013, № 3, էջ 247–248):

Թումանյանական հանճարի խոր ընկալումը, նրա ազգային որակի գիտակցումը, բանաստեղծի ձեռագրերի աշխարհում մշտական պրպտումները գրականագետին դարձրել են թումանյանական աշխարհի մշտական ընակիչ: Բանաստեղծի մասին հոդվածները թումանյանագիտությունից բացի հարստացնում են XIX դարավերջի և XX դարակզբի ազգային մշակույթի պատմությունը, նպաստում նրա լավագույն գործիչների ժառանգության ու գործունեության նորովի

քննաբանությանը, դառնում բանալի՝ բացահայտելու ազգային պատմության ճակատագրական բազում դրվագներ: Գրականագետի տասնյակ մենագրություններն ու հարյուրավոր հոդվածները մեկ ընդհանուր խորագիր ունեն՝ «Թումանյան»՝ համապարփակ մի ուսումնասիրություն, որը տալիս է մեծ բանաստեղծի և նրա ապրած դարաշրջանի ազգային ու մշակութային կյանքի չափազանց տարողունակ համապատկերը: Ս. Հովհաննիսյանին հաջողվում է ընդլայնել գրողի կյանքի ու գործունեության իմաստային դաշտը, առաջարկել բանալի նոր հարցադրումների համար, կատարել բանասիրական ճշգրտումներ, որոնք օգտաշահ են հեռահար նշանակությամբ՝ տեսական-մեթոդաբանական ուղենշումների իմաստով: Թումանյանի կենսագրությունը, ըստ էության, իր ժողովրդի կենսագրությունն է, իսկ այն գրելը միջգիտակարգային հետազոտական դաշտ է ենթադրում՝ բանասիրական, գրականագիտական, հոգեբանական, պատմական, սոցիալական, գեղագիտական, փիլիսոփայական, քաղաքագիտական գիտելիքների իմացությամբ: Այդ իսկ պատճառով Ս. Հովհաննիսյանի ուսումնասիրությունները միջառարկայական ուղղվածություն ունեն:

Աշխարհի տարբեր մասերում Ամենայն հայոց բանաստեղծի հանրահռչակման գործում նույնպես մեծ է Ս. Հովհաննիսյանի ավանդը: Այս ոլորտում նրա գործունեությունը եղել է համակարգված: Գիտական հոդվածներ են տպագրվել միջազգային հեղինակավոր գիտական Scopus, WOS, РИНЦ *և այլ շտեմարաններում* («Вопросы литературы», 2009, № 6, с. 420–426; 2023, № 4, с. 198–203, 2023, № 5, с. 158–166; «Неизвестный Достоевский», Петрозаводск, 2024, № 1, т. 11, с. 185–205; «Филологические науки», М., 2023, вып. № 3, с. 88–100; «Интеллигенция и мир», 2022, № 2, с. 78–102, 2023, № 1, с. 124–154 *և այլն): Ավելի քան 300 հոդվածներ են տպագրվել գիտահանրամատչելի ամսագրերում ու ժողովածուներում: Միայն «Հովհաննես Թումանյան. հանրագիտարան»-ում (2020, 1224 էջ) Հովհաննիսյանը ոչ միայն առաջաբանի, այլև 75 հոդվածների հեղինակ է: Գրականագետի «Պատմություններ Հ. Թումանյանի կյանքից» (2010, 237 էջ) և «Ամենյան հայոց բանաստեղծը» (2019, 400 էջ) գրքերը նախատեսված են ընթերցողների լայն լսարանի համար: Նրա հոդվածները թարգմանվել են այլ լեզուներով թե՛ հայ, թե՛ օտարազգի, մասնավորապես բուլղարացի և ուկրաինացի գրականագետների ու թարգմանիչների կողմից: Դրանք տպագրվել են ՌԴ-ի տարբեր քաղաքներում՝ Մոսկվայում* («Фабрика литературы», «Камертон», «Ноев ковчег»), *Ս. Պետերբուրգում* («Аватамк», «Наше дело»), *Կալուգայում* («Калуга многонациональная», *«Գործարար»*, «Доброе утро»), *Կրասնոդարում* («Еркрамас»), *Ֆրանսիայում՝ Փարիզում («Հառաջ»), Չեխիայում՝ Պրահայում («Օրեր»), ԱՄՆ-ում՝ Բոստոնում, Կալիֆորնիայի Փասադենա քաղաքում («Մասիս»): Կանադայում՝ Մոնրեալում* (“Port-Folio”), *Իտալիայում, Ավստրիայում՝ Վիեննայում և այլուր: Երբեմն ռուսերեն տպագրված հոդվածներն արժանացել են օտարազգի գրականագետների ու քննադատների ուշադրությանը և հենց նրանք են թարգմանել ու տարածել դրանք: 2004–2016 թթ. գրականագետը թղթակցում է մանկական «Աղբյուր» և «Ծիծեռնակ» ամսագրերին՝ հայ մանուկների համար տպագրելով ավելի քան երկու տասնյակ հոդվածներ:*

Ս. Հովհաննիսյանը զեկուցումներով մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների՝ Երևանում, Մոսկվայում, Պետերբուրգում և այլուր: Անհատական հրավերներով հանդես է եկել Կիևի՝ Շևչենկոյի անվ. համալսարանում, Թբիլիսիում (2019)՝ «Վերնատուն» հայագիտական կենտրոնի հրավերով, հայկական համայնքներում ԱՄՆ (Հյուստոն, 2016-ին՝ Սուրբ Գևորգ Հայաստանյաց Առաքելական եկեղեցու հրավերով), Սանկտ Պետերբուրգում՝ ՌԴ ազգային գրադարանի և հայկական համայնքի հրավերով (2025) և այլն:

Այսպիսով՝ Ս. Հովհաննիսյանը հայ բանասիրության ուսումնասիրման ոլորտում անցել է արդասավոր ու արդյունավետ գիտական ուղի: Նրա ուսումնասիրությունները լրացրել են հայ մշակույթի պատմության բազմաթիվ բաց էջեր՝ նպաստելով հայ գրականության ու նրա պատմության իմացությանն ու ճանաչողությանը: Այսօր էլ գիտնականը անխոնջ պատրաստակամությամբ շարունակում է բացահայտել ու վերլուծել թումանյական ժառանգությունը, ինչը վերստին փաստում է, որ ամեն սերունդ ունի իր Թումանյանը: Հետևաբար, գրականագետի գործունեության դաշտը երբեք չի փոխվելու՝ անկախ հարակից բազմաթիվ գիտական թեմաների արծարծումից:

Շնորհավորելով վաստակաշատ գիտնականին՝ ծննդյան 70-ամյակի առթիվ՝ մաղթում ենք նրան առողջություն, անմնացորդ ստեղծագործական եռանդ և նոր գիտական նվաճումներ՝ հանուն հայ մշակութային ժառանգության պահպանման ու բազմապատկման:

ԴՈՆԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ
(Սանկտ Պետերբուրգ)

Բ. գ. թ., Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ նոր գրականության պատմություն, աղբյուրագիտություն, գրական կապեր, հայ գաղթօջախների մշակութային կյանքի ուսումնասիրություն: Հեղինակ է 1, համահեղինակ 2 գրքի և 100-ից ավելի հոդվածի: ORCID:0009-0005-0658-0821,
d.mkrtchan@spbu.ru